

Adontz N., Les Dalassènes (գրախօսած Դկտ. Հ. Վ. Ինգլիզեան) 269—276:  
 Hamilton J. Arnott, Byzantine architecture and decoration (գրախօսած Դկտ. Հ. Ս. Կոզեան) 259—269:  
 Hofmann G. S. J., Il vicariato Apostolico di Costantinopoli 1453—1830 (գրախօսած Դկտ. Հ. Վ. Ինգլիզեան) 106—109:  
 Leroy Maurice, Grégoire Magistros et les traductions arméniennes d'auteurs grecs (գրախօսած Դկտ. Հ. Վ. Ինգլիզեան) 406—408:

Adontz N., Les Dalassènes (besprochen von Dr. P. V. Inglisian) 269—276.  
 Hamilton J. Arnott, Byzantine architecture and decoration (besprochen von D. P. S. Kogian) 259—269.  
 Hofmann G. S. J., Il vicariato Apostolico di Costantinopoli 1453—1830 (besprochen von P. V. Inglisian) 106—109.  
 Leroy Maurice, Grégoire Magistros et les traductions arméniennes d'auteurs grecs (besprochen von Dr. P. V. Inglisian) 406—408.



### Հ. ԳԱԲՐԻԷԼ Թ. Վ. ՄԷՆԷՎԻՇԵԱՆ

Տարւոյս նոյեմբեր 14ին ի Նովիսադ (Սերբիա) ի Տէր հանգեաւ Հ. Գաբրիէլ Թ. Վ. Մէնէվիշեան, ականաւոր անդամս Վիեննայի Մխիթարեան Միաբանութեան եւ վաստակաւոր աշխատակիցը «Հանդէս Ամսօրեայ» Ուսումնաթերթիս:

Հանգուցեալը ծնած էր ի Կ. Պոլիս, Մեծածոր, 3/16 ապրիլ 1864ին, իբրեւ որդի Գէորգ եւ Սոփիա Մէնէվիշեան ընտանեաց: Մկրտութեան անուամբ կոչուած էր Բուզանդ: Մանկութեան տարիները կ'անցնէ ծնողաց գուրգուրանքի տակ: Հազիւ թեւակոխած իր 14րդ տարիքը՝ առոյգ եւ վարվոուն պատանին կը տենչայ նուիրուիլ Աստուծոյ ծառայութեան Մխիթարեան Յարկին տակ: 1878, օգոստոս 29ին կը հասնի Վիեննա եւ Մխիթարեան Միաբանութիւնը կ'ընդունի զինքը իւր հովանոյն ներքեւ: Միշտ զուարթ, միշտ կայտառ կը կատարէ անիկա նախակրթական ընթացքը: Թէպէտ թուրքերէնը, յունարէնն եւ իտալերէնն էին իր արտայայտութեան բարբառները, բայց շուտով կ'ընտելանայ հայերէն լեզուի քաղցր հնչիւններուն. օր աւուր կը խորանայ հայերէն լեզուի ծանօթութեան մէջ. կը սիրէ զայն եւ կը մնայ նուիրուած անոր, նաեւ հասուն հասակին: Յաջողութեամբ կ'աւարտէ կրթական եւ աստուածաբանական ընթացքներն ալ:

1882, մարտ 25ին կ'անդամագրուի Մխիթարեան Միաբանութեան եւ 1887, մայիս 19ին կ'ընդունի Գեր. Արսէն Այտընեանէ բահանայական ձեռնադրութիւնը:

#### Գործնական ասպարէզի վրաս

Գործնական ասպարէզի վրայ երեւցաւ Մէնէվիշեան իբրեւ ուսուցիչ, իբրեւ անդամ՝ Միաբանութեան Վարչութեան եւ իբրեւ գրագէտ: 1886—1889 դասախօսեց Միաբանութեանս Կղերանոցի մէջ: 1889, օգոստոս 29ին մեկնեցաւ Կ. Պոլիս յայցելութիւն ծնողաց եւ անկէ Զմիւռնիա, գործելու իբրեւ փոխ-վարիչ տեղւոյն Մխիթարեան Դպրոցին: 1892ին կը գտնենք զինքը Կ. Պոլիս, ուր կը դասախօսէ Մխիթարեան Վարժարանին մէջ: 1895, օգոստոս 19ին կը հրաւիրուի Վիեննա, ստանձնելու «Հանդէս Ամսօրեայ» ի խմբագրութիւնը. միաժամանակ կը դասախօսէ Մխիթարեան Կղերանոցի մէջ հայերէն լեզուն: 1896, հոկտեմբեր 30ին կը մեկնի Պարիս, ուր հրաւիրուած էր P. Charmetandէն, նոյեմբեր 2ին մատուցանելու հայերէն պատարագ մը ի հանգիստ հայ Նահատակներու: Բանախօսութեամբ մը, գաղղիերէն լեզուով, ի վեր հանգիստ հայ Նահատակներու: 1898ին կը կարգէ Միաբանութեանս վարչութիւնը կը հանէ աղէտին սաստկութիւնը: 1898ին կը կարգէ Միաբանութեան վարժարանին ի Կ. Պոլիս: 1903ին կը գ. Գ. Մէնէվիշեան վարիչ Մխիթարեան վարժարանին ի Կ. Պոլիս: 1903ին կը գտնենք զինքը դարձեալ Վիեննա: 1908ին կ'ուղեւորի միւսանգամ Կ. Պոլիս, ստանձնելու, այս երկրորդ անգամ, վարժարանին վարչութիւնը: Բայց 1909ի Ընդհանուր Ժողովին, երբ ընտրուեցաւ Ընդհ. Աբբահայր Գեր. Գրիգոր Գովրիկեան, կ'անուանուի Հ. Մէնէվիշեան ի բացակայութեան Ընդհանուր Քարտուղար Միաբանութեան Վար-



չութեան. այս պաշտօնով կը հասնի նոյն տարւոյն նոյեմբեր 9ին Վիեննա: 1913ին հարկ կը տեսնէ վարչութիւնը ուղարկելու գինքը ի Նովիսադ տնտեսելու տեղոյն Սիւթարեան կալուածները: Ինքնագործեամբ, աչալըջութեամբ եւ իմաստութեամբ ծաղկեալ պայմաններու մէջ կը բարձրացնէ կալուածներուն տնտեսութիւնը, որով կը նպաստէ նաեւ Մայր վանքի տնտեսութեան, մանաւանդ մէջպատերազմեան եւ յետ պատերազմեան տազնապալից տարիներուն: Զոհեց իւր անձը, ապրեցաւ առանձնակեաց կեանք մը, երկար տարիներ, այս օտարութեան մէջ, բայց ապացուցուց անով, թէ որչափ անդորդ էր իւր սէրն հանդէպ Միաբանութեանս, զոր սիրած էր եւ սիրեց ցմահ: Հանգեաւ հոն ի Տէր, սիրուած շրջանակէն եւ համբաւուած իբրեւ ընտիր եկեղեցական, հայր աղքատներու եւ բարեկամ տառապեալներու: Կը սիրէր ժամանակ առ ժամանակ այցելել Մայր վանք, սփոփուելու եղբարց ժողովին մէջ, երկամեայ եւ եռամեայ ժամանակով: Կատարեց այս շրջանին նոր ուղեւորութիւններ, դէպի Հոով, Պարիս եւ Կ: Պոլիս:

Գործնական ասպարէզի վրայ կ'երեւար Մէնէվիչեան ստեպ ստեպ նաեւ իբրեւ բեմասաց քարոզիչ եւ իբրեւ հրապարակախօս, խլելով ամէն կողմէ բուռն ծափահարութիւններ:

**ԳՐԱԿԱՆ ԱՍՊԱՐԷԶ ՎՐԱՅ**

Ի բնէ ընդունակ լեզուներ սորվելու, սիրած էր Մէնէվիչեան լեզուագիտութիւնը: Արդէն դպրոցական սեղանի առաջ նուիրուած էր անիկա հայկաբանութեան: Բուռն եռանդով կը կարդար դասական հայերէն մատենագրութիւնը. շքանկանանալով լոկ ընթերցմամբ, կը հաւաքէր դասական գրականութեան բնուէրն ու աստիճանները: Այս հաւաքածուն արթնցուց իր մէջ փափագը, կազմել դասական հայերէնի ճոխ բառարան մը: Չհեռացած դեռ դպրոցական սեղանէն նա ունէր իր տրամադրութեան տակ արդէն լայնածաւալ բառարան մը, ուր ամէն դասական բառ իւր տեղն ունէր, բազմաթիւ կոչումներով եւ իջանամարով տեղեաց: Սկսաւ կարդալ այնուհետեւ ոչ-դասական հեղինակներն ալ, եւ հաւաքել բառեր, աւելի լայնածաւալ Բառարանի մը համար: Այս նպատակով ձեռնարկեց կազմել ոսմկօրէն լեզուի բառարան մ'ալ եւ ինամով կարդալ լեզուագիտական աշխատութիւններ եւ ծաղկաբաղել հայերէնի ստուգաբանութիւնները: Ծանօթացաւ հայերէնագէտ եւ լեզուաբան Յովհաննէս Հանուշի հետ եւ սկսաւ յաճախել անոր դասախօսութիւններուն համեմատական լեզուագիտութեան մասին: Ուսաւ սանսկրիտ լեզուն: Մէկ կողմէն ուսուցչին վաղահաս մահն եւ միւս կողմէն իր տեղափոխութիւնն Զմիւռնիա պատճառ եղան, որ ընդհատէր Մէնէվիչեան իւր ուսմունքը: Բայց շնուաղեցաւ իր մէջ սէրը դէպ ի լեզու: Նա շարունակեց պարապիլ լեզուագիտութեամբ, յատկապէս հայ լեզուն աչքի առաջ ունենալով: Կը յիշեմ հոս իր լեզուագիտական աշխատութիւններէն.

1. Հայերէն քանի մը բառերու որոշ նշանակութիւնը. այն է՝ բմբասն. գղ. pharynx, կոկորդ, գղ. gosier, եւ որկոր, գղ. vesophage. Հանդ. Ամս. 1887, էջ 40—43:
2. Վոլափիոկ եւ աշխարհաշեգոր. անդ, 1887, էջ 187—190:
3. Հիւրըման եւ արեւմտեան հայերէն արտասանութիւնը. անդ, 1888, էջ 122:
4. Հերիսայ, կասկ եւ ձեթ բառերն. անդ, 1889, էջ 158—159:
5. Նոր հայագէտ մը (Սոֆուս Բուզգէ). 1890, էջ 53—54:
6. Աշխարհաբար լեզուի արդի վիճակը. 1895, էջ 262—264, 291—293, 357—360:
7. Հայերէն գիւնի բառի ծագումը. անդ, 1896, էջ 289—292:

8. Բայրոյի եւ Կադամաիսիւն. անդ, 1905, էջ 221—222, 319—320:
9. Արդի լեզուագիտութիւնը. Վիեննա 1903, 8<sup>o</sup>, էջ Ը + 199: Նախ լոյս տեսած Հանդ. Ամս. մէջ 1896—1901 տարիներուն:
10. Լ. Մակրեանց, Հայերէն բարբառախօսութիւն. թարգմ. ի ռուսերէնէ Հ. Գ. Մ., Վիեննա 1899, 8<sup>o</sup>, էջ + 26 (նախ լոյս տեսած Հանդ. Ամս. 1898):



† Հ. ԳԱՐՐԻԷԼ Ժ. Վ. ՄԵՆԵՎԻՉԵԱՆ

11. Զննութիւն «Հայերէն ուսումնասիրութիւններ», անուն գործին. Սուր-հանդակ, 1899/1900, Թ. 145—148:
12. Ոսկեդարեան հայերէնի խնդիրը. Հանդ. Ամս. 1903, էջ 225—234: Նաեւ առանձին Վիեննա 1903:
13. Հայերէնի դեմ յանդգնութիւն մը. անդ, 1910, էջ 113—114:
14. Հայ լեզուի ուղղագրութիւնը. անդ, 1910, էջ 139—143, 177—179, 279—
15. Ստեփանու Մայիսեանի ձայնորդ լեզուայարար. անդ, 1910, էջ 225—234:

- 16. Հայերեն լեզուի ուղղագրութեան խնդիրը. Վիեննա 1910, 8<sup>o</sup>, էջ 73:
- 17. Արդի հայերենի անցեալը, ներկան ու ապագան: Յուշարձան գրական ժողովածոյ. Վիեննա 1912, էջ 258—274:
- 18. Ուղղագրութեան խնդիր կա՞յ հայուն համար: Հանդ. Ամս. 1913, էջ 724—736:

19. Հ. Յ. Գաթրոնեան — դասական հայերենի գոյնը. անդ, 1932, էջ 53—62:  
 Չե՞մ յիշեր հոս այն մանր պայքարական գրութիւնները, որոնք լոյս տեսած են զանազան օրաթերթերու մէջ, հայերէն լեզուի շուրջը:

Երբ Մէնէվիչեան գրական ասպարէզ պիտի իջնար, նոր էր ձեռք առած Միաբանութեան դեկը Գեր. Արսէն Այտընեան: Միաբանութիւնս չունէր իր ուսումնաթերթը: Գալէմբեարեան եւ Սէնէվիչեան, որոնք երիտասարդական աւիւնի մէջ, կ'ուզէին լսեցնել հրապարակին իրենց ձայնը, կ'ուզէին զրիչ շարժել եւ նպաստամատոյց ըլլալ հայ գրականութեան, կը թախանձեն նորընտիր Աբբահայրը, որ հաճի տալ իր հասունութիւնը նոր ուսումնաթերթի մը հրատարակութեան: Այտընեան ընդտառք կու գայ երիտասարդներու փափագին: Հ. Մէնէվիչեան, միշտ համակ եռանդ, կը փութայ աւետել աշխարհի նոր թերթին հրատարակութիւնը, անոր մկրտութենէն յտուաջ արդէն, ուղղելով հայութեան «ողջոյն հրաւիրանաց», որուն առաջին տունն է.

Լուրջ Գանուբեան եզերքէն  
 արագ թըռչիմ սրբավայր,  
 Սահիմ 'նդ այեր՝ Հայրենեաց  
 ազնիւ ոգով հրավառ,  
 Սիրոյ ողջոյն տալ փութամ,  
 հոսանաց խրոխտ Երասխայ,  
 Վիեննական ջերմ ծոցոյն  
 ծընունդ Հանդես Ամսօրեայ:

Թէպէտ կը խմբագրուէր ուսումնաթերթը, երիտասարդ ոյժեր կը շարադրէին յօդուածներ, բայց չունէր նորածնունդը տակաւին անուանակոչութիւն: Երբ հարցուեցաւ Գեր. Աբբահայր, թէ «գինչ կրեցցի մանուկն», ցոյց տուաւ նշանացի Սէնէվիչեանի Ողջոյն հրաւիրանացին չորրորդ տողը՝

Վիեննական ջերմ ծոցոյն  
 ծընունդ Հանդես Ամսօրեայ

Եւ լոյս տեսաւ Ուսումնաթերթը «Հանդէս Ամսօրեայ», անուանակոչութեամբ: Ի սկզբան «բարոյական, ուսումնական, արուեստագիտական» էր «Հանդէս Ամսօրեայ» ի ուղղութիւնը: Այս ուղղութեամբ ալ աշխատակցեցաւ թերթին Հ. Մէնէվիչեան: Բացի գիտական նիւթերէ — յաճախ անանուն, եւ բանաստեղծական հատուածներէ, տուաւ անիկա նաեւ վէպի մը թարգմանութիւնը.

20. Խաչ ու ծեփիջ. պատմական վեպ. Վիեննա 1890, 8<sup>o</sup>, էջ 245 (նախ լոյս տեսած Հանդ. Ամս. մէջ 1888—1889 տարիներուն):

Այս կարգի գրութիւններէն կը յիշեմ՝

- 21. Սրանչեղիք Չոռոյ. Հանդ. Ամս. 1887, էջ 6—8:
- 22. Պոռաչոյի արուեստ բանաստեղծութեան. Ա. Երգ: Անդ, 1889, էջ 89—92:

- 23. Զասկի օրն որոշելու դիրքին եղանակ. անդ, 1900, էջ 149—151:
- 24. Գիրք կամ յօդուած գրելու արուեստը. եւ Գիրք կարդալու արուեստը. Վիեննա 1898 եւ Բ. տպ. 1926, 8<sup>o</sup> (նախ լոյս տեսած Հանդ. Ամս. 1896—1898):
- 25. Բննադատութեան պաշտօնն եւ նպատակը: Հանդ. Ամս. 1888, էջ 41—42:

Երբ «Հանդէս Ամսօրեայ» տակաւ առ տակաւ դէպի հայագիտութիւն միտեցաւ, նաեւ Հ. Մէնէվիչեան իր ուշադրութիւնն ուղղեց հայագիտական հարցերուն: Հաճելի է ընթերցումը իր գրական թղթակցութիւններու, ուր զանազան գրական հարցեր կը շօշափէ, վերցուած հրապարակէն: Կը յիշեմ՝

- 26. Գրական թղթակցութիւններ. անդ, 1901, էջ 356—358:
- 27. Կ. Պոչոյոյ հայ մամուլը. անդ, 1902, էջ 33—37:
- 28. Գրական շողեր. անդ, 1902, էջ 73—77:
- 29. Գրական կեղծիք. անդ, 1902, էջ 120—123:
- 30. Գրական գայմուսանոյթ. անդ, 1902, էջ 154—158:
- 31. Հոյ կեանք (1909—1910). անդ, 1910, էջ 1—4, 33—36, 65—68, 97—100, 129—131, 161—166:
- 32. Պարզ գրել, հայերէն գրել. անդ, 1910, էջ 76—77:
- 33. Շատուխտութիւն եւ բննադատութիւն. անդ, 1911, էջ 38—42:
- 34. Գրական եւ լեզուական դիրքութիւններ. անդ, 1930, էջ 444—457, 719—738:

35. Վիեննայի Համալսարանի մէկ նիստը եւ Հայոց հին պատմութիւնը. անդ, 1898, էջ 199—201:

- 36. Գերման Արեւելագիտաց Զ. Համաժողովը. անդ, 1930, էջ 471—477:
- 37. «Մշակի» 40 ամեակը. անդ, 1912, էջ 321—330:
- 38. Բասմաջեան հիմնարկութիւն. անդ, 1924, էջ 289—294:
- 39. Տիկին Նեկտար Զուռն, անդ, 1890, էջ 90—91:
- 40. Յ. Տարեան փառք. անդ, 1890, էջ 137—138:
- 41. Ազգաբանութիւն ազնուական գարնին Տիւրքանց. անդ, 1890, էջ 209—216, 230—234, 276—280 (նաեւ առանձին հատորով լոյս տեսած՝ Վիեննա 1890, 8<sup>o</sup>, էջ 50):

42. Կենսագրական ակնարկ Արսէն արքեպ. ի Այտընեան կենաց եւ գործունեութեան (առթիւ 50 ամեայ յղբելեանին). անդ, 1895, 324—345) նաեւ առանձին, Վիեննա 1895, 8<sup>o</sup>, էջ 46:

43. Օր. Մարգարիտ Մելիք-Բեգլարեան, բժշկորհի. անդ, 1895, էջ 377—379:

- 44. Հ. Ղառնդ վ. Յովնանեան. անդ, 1897 (Յաւելուած փետրուարի):
- 45. Ռ. Պերպերեան (առթիւ յղբելեանին). անդ, 1902, էջ 10—15:
- 46. Հ. Եղիշէ Գաթրոնեան (առթիւ 50 ամեայ յղբելեանին), անդ, 1903, էջ 129—133, 187—191:

47. «Հանդէս Ամսօրեայ» ի կեանքը: Յուշարձան, 1912, էջ 56—64:  
 Բանասիրական աշխատասիրութեանց թէ՛ւ չունէր մասնաւոր բերում, բայց կը հետաքրքրէին զինքը նորութիւնները բանասիրական աշխարհէն: Ի սկզբան փորձեց լծուիլ ինքն ալ բանասիրութեան: Երբ Միլիթարեան երիտասարդ ոյժեր, միաբանած լծուիլ ինքն ալ բանասիրութեան: Երբ Միլիթարեան երիտասարդ ոյժեր, միաբանած էին ուսումնասիրել եւ հրատարակել մի մի դասական մատենագիրներ. Հ. Գալէմբեան



Առանձնացած ի Նովիսադ, հեռու Մատենադարանէ, կ'ապրէր Ն. Մէնէվիչեան իւր Բառարանին համար, որքան զբաղումները թոյլ կու տային:

Հիւանդութիւն մը, շաքարախտ, որ բունած էր իր մէջ, հակառակ ամէն զգուշութեան, կը գործէր իր աւերները: Վատուժած էին վերջին տարիները իր աչքերը: Տարույս, 1936 ի ամառը անցուց Վիեննա, եղբարց շրջանակին մէջ: Տկարատես էին աչքերը, դանդաղած քայլերը: Վերադառնալով Նովիսադ, պաղատութիւն մը, որ անուշադրութեան կ'առնուի, կ'առթէ թորատապ: Իր տկար ոյժերը անգոր կ'ըլլան դիմադրութեան: Եւ Ն. Մէնէվիչեան զո՞նք կ'երթայ հիւանդութեան, նոյեմբեր 14 ի արշալոյսին, կազուրուած հոգեպէս:

Յիշատակ Արդարոյն օրհնութեամբ եղիցի:

Հ. Ն. Ա.



### “ՀԱՆԴԵՍ ԱՄՍՕՐԵԱՅ”Ի

## 50 ԱՄԵԱՅ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԵԱՆ ՅԱՆԿԸ

ՀԱՆԴԵՍ ԱՄՍՕՐԵԱՅ առողջիկայ թուով կը բուրե հոս գոյութեան 50 ամեայ շրջանը:

Այս առթիւ փափագեցաւ խմբագրութիւնս կցել պրակիս ուսումնասիրութիւս 50 ամեայ բովանդակութեան համար, որ անդամները անուշ գիտնականներէ թարգմանութեամբ:

Տպագրութեան դժուարութիւնը թոյլ շտապէ մեզ իրագործել մեզ փափագը: Յոսով ենք, սակայն, թե պիտի յաջողինք յընթաց 1937 տարուոյ յոյս ընծայել զայն առանձին պրակով, որ պիտի նկատուի “Յաւելուած 1936 տարեշրջանին”, և առաքել մեր կաժանորդներուն հարեա թանկագին ընծայ:

Խմբագրութիւն

“ՀԱՆԴԵՍ ԱՄՍՕՐԵԱՅ”Ի:

# ՀԱՆԴԵՍ ԱՄՍՕՐԵԱՅ

## ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԹԵՐԹ

ԹԻ 10-12

ՀՈԿՏԵՄԲԵՐ-ԴԵԿՏԵՄԲԵՐ

Ձ. ՏԱՐԻ 1936

### ՔՆՆՈՒԹԻՐՆ ՏԵՍԼԵՆ Ս. ՍԸՀԵՎՈՅ

1. Հասած է մեզի Տեսիլք մը, որ վերադրուած է Մեծին Սահակայ, Հայոց հայրապետի: Տեսիլքիս բնագիրը ծանօթ է հրատարակի վրայ: Անոր յառաջագայութեան, հեղինակի եւ գրութեան ժամանակի մասին կատարուած են քննութիւններ. բայց յարուցուած հարցերը չեն դաժմ լրիւ իրենց լուծումը:

Հարցերը միւսանգամ քննութեան ենթարկելէ յառաջ, որպէս զի իրաց մինչեւ այսօր առած ընթացքը պայծառ ներկայացուցած ըլլամ, կարեւոր համարեցայ դիւրընկալ շրջադէմ մէջ պատկերացնել Տեսիլքիս շուրջը ի սկզբանէ անտի դոյացած դրականութիւնը. եւ նախ իսկ Բնագրին աւանդութիւնը, նախ եւ նորից Բնագրին եւ նոր եւ նորագոյն նկարներուն անոր շուրջը յայտնուած տեսութիւնները:

Շատ քիչերը, դժբախտաբար, լրջօրէն եւ առարկայական զննութեամբ մերձեցած են Տեսիլքիս քննութեան: Յաճախ անհիմն են թաղան կառուցուածքներու, յայտնուած են երբեմն նաեւ յանդուզն հաւանութեամբ տեսութիւններ, եւ զարմանալիօրէն այնպիսիներէ, որոնք իրենց կեանքի մէջ առ հասանելի իրերէ աւանդամուլ քաջանուն եղած են:

2. Սրբոյն Սահակայ Տեսիլքին բնագիրը աւանդուած է մեզի Ղազար Փարպեցւոյ Պատմութեան սկիզբը դրուած Ա. Դրուագին մէջ, որ կը բաղկանայ երեք մասէ.

- ա. Յառաջաբանական մուտք.
- բ. Տեսիլն եւ Մեկնութիւնը.
- գ. Վերջաբան:

Մուտքին մէջ կը պատմուի, թէ Վոսաթ Ե. ի օրով, Սահակ կաթողիկոս զահրնկէց եղած էր եւ աթուր յանձնուած Սուրմակ, ապա Բրքիչոյ եւ հուսկ յետոյ Շահակ ասորի (Մանգղիսի, Աղբիւնսեան տնէ) անհանձար

կաթողիկոսներու: Վերջոյս մահէն ետքը հայ նախարարները խորհուրդի կը նստին եւ կ'որոշեն զիմել Սահակ զահրնկէց կաթողիկոսին եւ ինչքեւ, որ՝ մոռացութեան տալով իրեն դէմ եղած անիրաւութիւնը յանձն առնէ միւսանգամ ձեռք առնել Աթուրի վարչութիւնը: Սահակ կը մերժէ նախարարներու թիւը: այս առթիւ կը պատմէ անոնց առաջարկը. «այս առթիւ կը պատմէ անոնց Տեսիլք մը, զոր նա տեսած էր «յառաջ քան զձեռնադրելն յեպիսկոպոսութիւն», ուստի մինչդեռ երէց էր:

Աւագ հինգշաբթի օրը, երեկոյեան դէմ կը գտնուէի Վաղարշապատ, կաթողիկէ եկեղեցւոյ մէջ, բազմած աթուրի վրայ, «մերձ առ սեղանն Աստուծոյ». եւ ահա կը յայտնուի ինձ «յանուրջ», «գիտելութիւն» ապագայ ժամանակի: Այսպէս կը պատմէ Սահակ իւր Տեսիլք հայ նախարարներու: Տեսիլքս կ'ընդունի Սահակ ի պատասխան իւր ամենօրեայ խնդրուածքին, որով կը հայցէր Աստուծոյ «չորհել ինձ արու որդի, որպէս եւ չորհեալ էր > Եախնեացն իմոց՝ որ յառաջ քան զիս էին ամուսնացեալք յաղաղս որդէնութեան»:

Տեսիլքս, զոր կ'ընդունի Սահակ, մուտք էր ըստ իմաստին: Եւ ահա կ'երեւայ իրեն Աստուծոյ հրեշտակը եւ կը բացատրէ մի առ մի Տեսիլքի խորհուրդները միտքը, զոր կարելի է ամփոփել այսպէս. Սահակ թէպէտ արու զաւակ պիտի չունենայ, բայց պիտի արու զաւակ իր ցեղէն (աղջկան գծէն) շառաւիղ-յանն իր ցեղէն արեամբը պիտի յաճախեն ներ, որոնք իրենց արեամբը պիտի յաճախեն Աստուծոյ փառքը: կաթողիկոսութիւնը թէեւ պիտի զաղրի յանձին Սահակայ Ս. Գրիգորի պիտի զաղրի յանձին Սահակայ Ս. Գրիգորի ցեղին «ի վիճակէ ցեղին ցեղէն, բայց պիտի ելլեն «ի վիճակէ ցեղին Գրիգորի» քահանայապետներ, որոնք պիտի նորոգեն Գրիգորի ցեղին քահանայապետութիւնը: կ'ակնարկուի նաեւ Արշակունեաց սան զաղարումը (յանձին Վոսաթապուհի) եւ նոյն հարստութեան նորոգութիւնը (յանձին Արտաշիսի):